ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 4-6

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) ի դեմս ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը,** (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) **Արտակ Հենրիկի Մկրտչյանի**, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում»** ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված **338170200 (երեք հարյուր երեսունութ միլիոն հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **338170200 (երեք հարյուր երեսունութ միլիոն հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ

իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԱԿԱԴԵՄԻԱ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24	ք.Երևան, Հր.Ներսիսյան 25
Հ/հ 900011024115 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/հ 900018005505 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
	ՀԿՀՀ 00008791
ՀՀ ԳԱԱ նախագահ՝ _____ (ստորագրություն)	Տնօրեն՝ _____ (ստորագրություն)
Աշոտ Սաղյան	**Արտակ Մկրտչյան**
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 1
«27» հունվարի 2022 թ.
N Հ-6 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արտակ Մկրտչյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» հունվարի 2022 թ. N Հ-6 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ **338170200 (երեք հարյուր երեսունութ միլիոն հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ**:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ԱԿԱԴԵՄԻԱ	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
Նախագահ՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Աշոտ Սաղյան	**Արտակ Մկրտչյան**

Հավելված N 2
«27» հունվարի 2022 թ.
N 4-6 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
   - Կատարել հիմնարար հետազոտություններ կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, ցածրջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության, այլընտրանքային էներգետիկայի և գիտատար սարքաշինության բնագավառներում:
   - Ստացված հիմնարար հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարել գիտատեխնիկական մշակումներ և ստեղծել համապատասխան գիտատար սարքերի լաբորատոր նմուշներ: Կատարել մշակված ու ստեղծված սարքերի համար շուկայի մանիտորինգ ու հնարավոր ներդրումային դաշտի ուսումնասիրում:
   - Պահպանել և ընդլայնել ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը, համալրելով գիտական հետազոտությունների մեջ ընդգրկված երիտասարդ մասնագետներով:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

   Արդյունքների հավաստիություն, նորույթ, խնդրի դրվածքի արդիականություն, հրատապություն, կիրառության հնարավորություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, համաշխարհային գիտության մեջ ինստիտուտին կանոնադրությամբ ամրագրված գիտական ուղղություններով իրականացվող հետազոտությունների ուրույն տեղի ամրապնդում ու ընդլայնում:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

   Ընթացիկ ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2021-2025 թթ. ժամանակահատվածում իրականացվող գիտական ծրագրի հերթական փուլը: Նախատեսվում է շարունակել և ընդլայնել ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով՝
   - Մյոսբաուէրյան ու մոդուլացիոն մյոսբաուէրյան սպեկտրասկոպիաներ:
   - Ռենտգենյան, սինքրոտրոնային, գամմա և նեյտրոնային սպեկտրասկոպիաներ:

- Կարգավորված միջավայրերում ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների կանալացման երևույթի և պարամետրիկ ռենտգենյան ճառագայթման ուսումնասիրություն արտաքին դաշտերի առկայության պայմաններում:
- Կարգավորված և ամորֆ միջավայրերում ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների անցումային և արգելակային կոհերենտ ճառագայթման ուսումնասիրություն արտաքին դաշտերի առկայության պայմաններում:
- Տարբեր հետագծերով շարժվող ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների մակածած էլեկտրամագնիսական դաշտի ուսումնասիրություն գլանային ու սֆերիկ համաչափությամբ օժտված միջավայրերում դիէլեկտրական և մագնիսական թափանցելիության տարբեր արժեքների դեպքում:
- Մակերևույթային ակուստիկ ալիքների միջոցով վակուումից առաքված քվանտային ճառագայթման հետազոտում:
- Արտաքին ակուստիկ դաշտերի առկայության պայմաններում սառը պլազմայում տեղի ունեցող փուլային անցումների ուսումնասիրում:
- Նոր տիպի մոնոքրոմատիկ ճառագայթման աղբյուրների ստեղծում:
- Ակուստապլազմային մեթոդների կիրառում փոշենստեցման սարքերում:
- Էլեկտրամագնիսական և ակուստիկական ալիքների տարածումը տարբեր տիպի անհամասեռություններ պարունակող միջավայրերում ու նրանց հետ փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող երևույթների ուսումնասիրում:
- Բյուրեղներում և մետամիջավայրերում էլեկտրամագնիսական ալիքների տարածման ու դիֆրակցիոն երևույթների ուսումնասիրում:
- Բյուրեղներում արտաքին ազդակների առկայության պայմաններում անդրադարձած ջերմային նեյտրոնների և ռենտգենյան փնջի երկչափ ֆոկուսացման երևույթի ուսումնասիրում:
- Ռենտգենյան ճառագայթների սֆերիկ ալիքային դինամիկ դիֆրակցիայում Թալբոտի էֆեկտի ուսումնասիրումը բյուրեղական ցանցում:
- Նյութագիտություն,
- Գիտատար սարքաշինություն:

Ընդլայնել ինստիտուտում հիմնադրված նոր գիտական ուղղության՝ ակուստաֆիզիկայի բնագավառում ստացված արդյունքների կիրառման շրջանակները գիտատեխնիկական հետազոտությունների հետևյալ ուղղություններում՝

- Ֆիզիկական բժշկություն,
- Սեյսմոլոգիա,
- Միջավայրի ճառագայթային մոնիտորինգ,
- Այլընտրանքային էներգետիկա,
- Գյուղատնտեսություն:

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

Աղյուսակ 1

N	Ակնկալվող գիտական արդյունքները	Քանակը
1	Գիտական հոդվածներ Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում	15
2	Այլ գրախոսվող ամսագրերում գիտական հոդվածներ	20
3	Միջազգային գիտաժողովների հաղորդություններ (proceeding)	20
4	Միջազգային գիտաժողովների թեզիսներ	37
5	Մենագրություններ, կոլեկտիվ մենագրություններ, հոդվածների (թեզիսների) ժողովածուներ	3
6	Այլ հրապարակումներ և արդյունքներ (Արտոնագրեր, ներկայացումներ, նոր գիտական սարքերի լաբորատոր փորձանմուշներ և այլն)	5
Ընդամենը		**100**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 3
«27» հունվարի 2022 թ.
N 4-6 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *
«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	**Հիմնարար հետազոտություններ**					
1.1	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ	Հոդվածներ և այլ հրապարակումներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 2/3/10/0/0/0 (**15**)	01.01.2022-31.03.2022	64629
1.2	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ	Հոդվածներ և այլ հրապարակումներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 3/3/0/3/0/0 (**9**)	01.04.2022-30.06.2022	80786.3
1.3	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի,	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ	Հոդվածներ և այլ հրապարակումներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 4/4/5/20/1/1 (**35**)	01.07.2022-30.09.2022	80786.3

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

		պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում				
1.4	Փորձարարական ու տեսական հետազոտություններ	Իրականացնել հիմնարար բնույթի գիտատեխնիկական հետազոտություն կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ակուստիկայի, ակուստաֆիզիկայի, պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության, ֆիզիկական բժշկության բնագավառներում	Փորձերի նախապատրաստում, փորձեր, տեսական հաշվարկներ	Հոդվածներ և այլ հրապարակումներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 6/5/0/5/2/1 (**19**), տարեկան հաշվետվություն	01.10.2022-31.12.2022	96943.6
2.	**Հետազոտություններ գիտատար սարքաշինության բնագավառում**					
2.1	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	Հոդվածներ և այլ գիտական արդյունքներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 0/1/0/0/0/0 (**1**),	01.01.2022-31.03.2022	3000
2.2	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	Հոդվածներ և այլ գիտական արդյունքներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 0/1/0/2/0/1 (**4**),	01.04.2022-30.06.2022	3000
2.3	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում ու ստեղծում	Հիմնվելով իրականացված հիմնարար հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	Հոդվածներ և այլ գիտական արդյունքներ՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 0/1/0/4/0/1 (**7**),	01.07.2022-30.09.2022	3000
2.4	Գիտատեխնիկական մշակումներ, սարքերի նախագծում	Հիմնվելով իրականացված հիմնարար	Նախագծային աշխատանքներ, արտոնագրերի	Հոդվածներ և այլ գիտական արդյունքներ՝ ըստ	01.10.2022-31.12.2022	3000

	ու ստեղծում	հետազոտությունների արդյունքների վրա կատարել գիտատեխնիկական ուսումնասիրություններ հնարավոր նոր սարքերի, մեթոդների և տեխնոլոգիաների ստեղծման նպատակով	պատրաստում, հնարավոր ինովացիոն ոլորտների ուսումնասիրում	Աղյուսակ 1-ում նշված 1-6 կետերի՝ 0/2/5/3/0/1 (**11**), տարեկան հաշվետվություն		
3.	**Միջոցառումների կազմակերպում**					
3.1	Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում	Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	Թեզիսների և գիտաժողովի նյութերի պատրաստում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	Սեմինարներ, գիտաժողովներ և այլն	01.01.2022-31.03.2022	200
3.2	Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում **(Ակադեմիկոս Ա.Ռ. Մկրտչյանի անվան միջազգային գիտական դպրոց)**	Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	Թեզիսների ժողովածուի հրապարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	Սեմինարներ, գիտաժողովներ և այլն	01.04.2022-30.06.2022	1800
3.3	Միջազգային, հանրապետական ու տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում	Իրականացնել կազմակերպչական աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	Միգազգային դպրոցի նյութերի հրապարակում, կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	Սեմինարներ, գիտաժողովներ և այլն	01.07.2022-30.09.2022	500
3.4	Միջազգային, հանրապետական ու	Իրականացնել կազմակերպչական	Թեզիսների պատրաստում,	Սեմինարներ, գիտաժողովներ,	01.10.2022-31.12.2022	525

	տեղային նշանակության գիտաժողովների, սեմինարների, գիտական հանդիպումների և համատեղ գիտահետազոտական հետազոտությունների կազմակերպում	աշխատանքներ ստացված գիտատեխնիկական արդյունքների քննարկման, ներկայացման և գիտական հանրությանը ծանոթացնելու նպատակով: Ընդլայնել գիտական համագործակցության շրջանակները	կազմակերպչական, գրախոսական ու հրատարակչական աշխատանքներ	այլ հրապարակումներ, տարեկան հաշվետվություն		
Ընդամենը						**338170,2**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 4
«27» հունվարի 2022 թ.
N 66 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	*298730*	*59746*	*74682,5*	*74682,5*	*89619*
2	տնտեսական և այլ ծախսեր*	39440,2	*7888*	*9860,1*	*9860,1*	*11832*
ԸՆԴԱՄԵՆԸ		**338170,2**	*67634*	*84542,6*	*84542,6*	*101451*

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ **Արմեն Մարտիրոսյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված N 4.1
«27» հունվարի 2022 թ.
N 4-6 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	11706,6
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*3500*
	գազի ծառայություն	*4268,8*
	ջրամատակարարման ծառայություն	*765*
	կապի ծառայություն	*2488,8*
	Աղբահանություն	*684*
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	705
4	Նյութեր	8785
5	Գործուղումներ	7280
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	3025
7	Արշավախմբեր	6300
8	Հրատարակման ծախսեր	450
	Այլ ծախսեր	1188,6
Ընդամենը		**39440,2**

Կազմակերպության տնօրեն՝ _____ **Արտակ Մկրտչյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ **Արմեն Մարտիրոսյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*